# Իրավաբան

## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

- Ներկայացնել և պաշտպանել ընկերության իրավունքները և շահերը ՀՀ բոլոր դատարաններում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում,
- Կազմել հայցադիմումներ, վճարման կարգադրություններ, դիմումներ, միջնորդություններ, տեղեկանքներ և այլ բնույթի իրավաբանական փաստաթղթեր, ինչպես նաև ՀՀ դատարաններում գործեր հարուցելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
- Մասնակցել դատարանների նիստերին և ընկերությանը առաջարկներ ներկայացնել դատական որոշումների արդյունավետ կատարման ուղղությամբ,
- Իրականացնել մոնիթորինգ՝ պարտավորությունների հավաքագրման գործընթացներում առկա խնդիրները դուրս բերելու ուղղությամբ,
- Մշակել և անմիջական ղեկավարին ներկայացնել տարբեր գործընթացների բարելավման և արդյունավետության բարձրացման ուղիներ,
- Ընկերության խնդրահարույց հաճախորդների հետ իրականացնել խորհրդատվական, բացատրական աշխատանքներ՝ ընկերության հետ հարաբերությունները արտադատական կարգով և/կամ հաշտությամբ կարգավորելու նպատակով,
- Պատրաստել ընկերությանը հասցեագրված հարցումների, հայցերի, բողոքների, պահանջների և առաջարկությունների պատասխանի նախագծեր,
- Անհատական վերաբերմունք ցուցաբերել յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ՝ գտնելով լուծումներ, որոնք միաժամանակ կբավարարեն և հաճախորդի պահանջները և կհամապատասխանեն կազմակերպության արժեքներին ու սկզբունքներին,
- Իրականացնել այլ խնդիրների լուծում՝ ըստ անհրաժեշտության:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

- Բարձրագույն իրավաբանական կրթություն,
- Առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ: Ֆինանսական կազմակերպություններում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն,
- Փաստաբանի արտոնագրի առկայությունը կդիտվի որպես առավելություն,
- ՀՀ քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության, ՀՀ ԿԲ կանոնակարգերի, վարկային կազմակերպությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի իմացություն,
- Տեղեկատվությունը հավաքելու, վերլուծելու և հաշվետվություններ ներկայացնելու ունակություն,
- Շփման և բանակցություններ վարելու գերազանց հմտություններ,
- Վերլուծական և համադրական մտածողություն,
- Սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն,
- Գրավոր հաղորդակցության գերազանց հմտություններ,
- Հայերենի գերազանց իմացություն, անգլերենի և ռուսերենի լավ իմացությունը առավելություն է,
- Մասնագիտական զարգացման և վերապատրաստման պատրաստակամություն,
- Համակարգչային գիտելիքների առկայություն (MS Office):

**ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ 12.03.2018**

**ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ՝**

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են թափուր պաշտոնի պահանջներին, խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ hr@finca.am՝ էլ. նամակի վերնագրում լրացնելով՝ **“Իրավաբան - Անուն, Ազգանուն”**: